— Չէին ուզում՝ պնդեցի։

— Դուք չփոթում էք մտայնութիւնը ոգու հետ։ Բոլորովին տարբեր վիճակներ են։ Բառերից էլ պէտք չէ խաբուել։ Ամէն մի բառ պարունակում է իր մէջ, կամ աւելի շուտ իր շուրջը, ամբողջ մի աշխարհ, որը խոր հոգեկան իրականութիւն է։ Բառը աւանդութիւն է։

— Ուստի մեռածութիւն։

— Ուստի կեանք։ Միակ կեանքը, որ կարելի է երեւակայել։ Բառը, այսինքն՝ դարերի միջից եկած խմաստը մեռածութիւն է, դիակ է, երբ մտայնութիւն է. սակայն, նա խոր կեանք է, երբ ոգի է եւ աւանդութիւն։

— Աւանդութի՞ւն...

— Այո՛, աւանդութիւն։ Երբ աւանդութիւնը վեր է ածւում որոշ ձեւի, պատկերի եւ սովորութեան, մեքենաբար կրկնուած, նա դառնում է մտայնութիւն, այսինքն՝ արդելք, այսինքն՝ մահ։

— Հենց ես էլ այդ եմ ուզում ասել։

— Սակայն, աւանդութիւնը ձեւ չէ, այլ ոգի։ Մի վիճակ, որը տեւական կեանք ունի, ինքն իրեն հաւատարիմ, ամբողջական եւ անվերջանալի։ Աւանդութիւնը այն է՝ ինչ որ չի փոխւում ներքնապէս, բայց արտայայտութեան նորանոր ձեւեր է ստեղծում, բայց գոյացման նոր պատկերներ է յօրինում, շարժուն է, ներուժ է, կանք է։ Եւ աւանդութան հետ տարօրինակ արկածներ են պատահում։ Պատահում է, օրինակի համար, որ մի Դանտէ խզում է բոլոր սովորութիւնների հետ, տարիներով ծամծմուած եւ կրկնուած պատկերների չէնքը վար է նետում, հուժկու բռունցք է զարնում իր դարի մտայնութեան եւ իր երգը կառուցում է անծանօթ «չինուածանիւթերով», ինչպէս ասում են այստեղ։ Նրան ոչ ոք չի հասկանում։ Ո՞ւր մնացին լատինաբանների ոճը, սքոլաստիկների նուրբ ու այլեւս անվիճելի դիալեկտիկան, տիրող կրօնքի պարտադրական վարդապետութիւնը, քաղաքական ձգտումների ընդունուած հոսանքը, բանաստեղծական մատչելի ձեւերը ու հաղար ուրիշ աղդակներ, որոնք ժամանակի մտայնութիւնն էին կազմում։ Դանտէն այդ ամէնը ուրանում էր։ Նա թւում էր օտար եւ անհասկանալի։

— Մինչդեռ...

— Մինչդեռ միակն էր, որ փրկեց աւանդութիւնը, մարմնացրեց իտալական ոգին եւ անկիւնաքարը դրաւ ապագայ վերածննդեան շրջանին։ Եւ նկատեցէք, որ Իտալիան՝ բաժան բաժան եղած Իտալիան՝ առաջին անգամ ապրեց իբրեւ միաւոր, իբրեւ ազգ եւ լեզու։ Բարբառները դրեթէ անհետացան։ Հռոմը, Ֆիորեցիան, Ռավեննան, Վենետիկը, Միլանօն, Ասիզին եւ հաղար ուրիշ վայրեր դարձան ընդհանուր իտալական գործողութեան խորհրդանշանները, մարմին առին, ջահերի պէս վառուեցին, շաղկապուեցին եւ այլեւս միացած՝ մասնակցեցին համայն տիեզերական կեանքին։

— Բանաստեղծութիւն է։

— Այո՛, տնտեսագիտութիւն չէ, եւ սակայն, Իտալիան արդիւնք է բանաստեղծութեան. նա դուրս է եկել մեծ մի պօէմայից ու շարունակում է ապրել, որովհետեւ այդ պօէման դեռ գոյութիւն ունի, թէ չէ բաժան բաժան կը լինէր, կը փոշիանար...

— Դա ի՞նչ կաթոլիկ եւ միստիկ տեսակէտներ են...

— Բնազանցական...

— Բառե՛ր... Մարքսիստական տարմուդականութիւնը, միացած միջնադարեան ոքոլաստիկների պատմական դիալեկտիկային, ստեղծել է ամենաարտառոց եւ ամենավերացական աշխարհահայեացքը, պիտի ասեմ հաւատքը, որ երբեք մարդկութիւնը տեսել է։ Պոռոտախօս այդ հեռատրականութիւնը դունչը խոթել է ցեխի մէջ, աչքերը փակել, սիրտը քօղարկել եւ կարծում է, որ մոռացել է իրականութեան։ Մինչդեռ, ինքը իր մէջ, անիրական մի վարդապետութիւն է։ Վաճառականական սողոսկուն մի մտայնութիւն, սընանկ՝ իրական իրականութեան առջեւ։

— Ձեզ պէտք էր բանտարկել։

— Եթէ կարծում էք, որ բանտարկելով խնդիրը կը լուծէք՝ բանտարկեցէք։ Բայց ահա, առնե՛նք հէնց մեր այս Հայաստանը եւ առնենք տնտեսագիտական, պատմական նիւթապաշտութեան Ձեր չափանիշը եւ չափենք։ Այստեղ ոչ մի օրէնք, ընկերաբանական ոչ մի ֆորմուլա, մարքսիստական ոչ մի կլիշէ կարող է դիմանալ։ Ինչո՞վ կարող էք բացատրել նրա կազմութիւնը եւ նրա գոյութիւնը. ո՞րն է նրա պատմական զարգացումը. ո՞րպիսի նիւ-

Հայ մատենագրության թուանշանային գրադարան